ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/386/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 հոկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի, 2025 թվականի հոկտեմբերի 27-ին քննելով Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու անդամ Արայիկ Հրաչի Գևորգյանի ընտանիքի անդամ Սիլվա Արայիկի Գևորգյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/386/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված

հայտարարագրերը, մասնավորապես՝ 2024 թվականի տարեկան հայտարարգրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու անդամ Արայիկ Հրաչի Գևորգյանի ընտանիքի անդամ Սիլվա Արայիկի Գևորգյանի Հայտարարագիրը Հանձանաժողով չի ներկայացվել:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 15-ին թիվ 01/3240/573-2025 գրությամբ Սիլվա Գևորգյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և Հանձնաժողով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Սիլվա Գևորգյանին ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 10:00-ին ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Նշված ծանուցումը Սիլվա Գևորգյանի կողմից ստացվել է 2025 թվականի օգոստոսի 28-ին (հիմք APC0129179993AM փոստային առաքանին): Սակայն ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2025 թվականի սեպտեմբերի 30-ին պատշաճ ծանուցված Սիլվա Գևորգյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 442/25 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ տեղեկացված Սիլվա Գևորգյանի բացակայությամբ 2025 թվականի հոկտեմբերի 27-ին, ժամը՝ 16:15-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Սիլվա Գևորգյանի կողմից պարզաբումներ չեն ներկայացվել:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/386/2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ.

3.1 Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու անդամ Արայիկ Հրաչի Գևորգյանը պաշտոնատար անձի 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ տվյալները» ենթաբաժնում Սիլվա Արայիկի Գևորգյանին հայտարարագրել է, որպես համատեղ բնակվող չափահաս անձ:

3.2 Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու անդամ Արայիկ Հրաչի Գևորգյանի ընտանիքի անդամ Սիլվա Արայիկի Գևորգյանի կողմից Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.3 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Արարատի մարզի Վեդի համայնքի ավագանու անդամ Արայիկ Հրաչի Գևորգյանի ընտանիքի անդամ Սիլվա Արայիկի Գևորգյանը Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է պաշտոնատար անձանց պաշտոնեական պարտականությունները ստանձնելու՝ ընտանիքի անդամների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածով կանոնակարգված են հայտարարագրեր ներկայացնելու ժամկետները (ստանձնման հայտարարագրի պարագայում՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում):

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները

լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք

կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը անպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորություն կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք

այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում Սիլվա Արայիկի Գևորգյանի կողմից մինչև գործի քննության օրը Հայտարարագիր ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սիլվա Արայիկի Գևորգյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/386/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիլվա Արայիկի Գևորգյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**